Հավելված 2
առողջապահության նախարարի
2020 թ. ապրիլի «27» -ի թիվ 1362 – Լ հրամանի

ՍՈՒԲՍԻԴԻԱՅԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԱՆ-ՍԲՍ 354

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը, ի դեմս Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության գլխավոր քարտուղար Լուսինե Քոչարյանի՝ որը գործում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության հիման վրա /այսուհետ՝ Սուբսիդիա հատկացնող/,մի կողմից,

Վ.Դվինի ԲԱ ՀՈԱԿ-ի

ի դեմս տնօրեն՝ Նվարդ Աղազարյանի, որը գործում է Վ.Դվինի ԲԱ ՀՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա /այսուհետ՝ Սուբսիդիա ստացող/, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սուբսիդիա հատկացնողը հանձնարարում է Սուբսիդիա ստացողին, իսկ վերջինս պարտավորվում է սույն պայմանագրով տրամադրվող գումարի դիմաց սույն պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետում իրականացնել ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1919-Ն որոշման հավելված N 9-ի, ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 19 N 347-Ն որոշման հավելված 1-ի սահմանված 11004 «Էլեկտրոնային առողջապահության համակարգի պահպանում» միջոցառման գումարների փոխհատուցումը:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Սուբսիդիա հատկացնողը պարտավոր է՝

2.1.1. Սույն պայմանագրի պահանջներին համապատասխան՝ Սուբսիդիա ստացողի և «Էլեկտրոնային առողջապահության ազգային օպերատոր» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրի շրջանակներում էլեկտրոնային առողջապահության համակարգին միացման վճարների հաշիվների և սուբսիդիա ստացողի կողմից 2019 թվականի դեկտեմբերի 16-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում վճարված գումարները փոխհատուցել առողջապահության նախարարի 2019 թվականի մայիսի 16-ի թիվ 1253-Ա հրամանով նախատեսված գումարի 100%-ի չափով:

2.2. Սուբսիդիա հատկացնողը իրավունք ունի՝

2.2.1. ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների, ստուգել Սուբսիդիա ստացողի կողմից սույն պայմանագրի կատարման ընթացքը և որակը, առանց միջամտելու վերջինիս կանոնադրական գործունեությանը (բացառությամբ օրենքով և Սուբսիդիա ստացողի կանոնադրությամբ սահմանված դեպքերի),

2.2.2. Սուբսիդիա ստացողից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.2.3. վերահսկել Սուբսիդիա ստացողին հատկացված դրամական միջոցների նպատակային օգտագործումը:

2.3. Սուբսիդիա ստացողը պարտավոր է՝

2.3.1. Սուբսիդիա հատկացնողին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին,

2.3.2. ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները սույն պայմանագրի կատարման համար առաջացած բոլոր տեսակի խոչընդոտները անհապաղ վերացնելու համար,

2.3.3. Սուբսիդիա հատկացնողի պահանջով ներկայացնել սույն պայմանագրի կատարմանը վերաբերող բոլոր տեսակի փաստաթղթերը:

2.4. Սուբսիդիա ստացողն իրավունք ունի՝

2.4.1. Սուբսիդիա հատկացնողից պահանջել ընդունել էլեկտրոնային առողջապահության համակարգին միացման վճարները փոխհատուցելու վերաբերյալ հաշիվները, եթե աշխատանքները կատարվել են պատշաճ լրիվ ծավալով, պատշաճ ձևով ու կարգով,

2.4.2. Սուբսիդիա հատկացնողից պահանջել վերացնել Կատարողի գործողություններից (անգործությունից) անկախ սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել սույն պայմանագրի պայմանները,

2.4.3. պահանջել վաղաժամկետ լուծել սույն պայմանագիրը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի շրջանակներում վճարումն իրականացվում է Սուբսիդիա ստացողի 2019 թվականի դեկտեմբերի 16-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում սուբսիդավորման համար փոխհատուցված փաստացի ներկայացված հաշիվների հիման վրա:

3.2. Սույն պայմանագրի 3.1. կետում նշված գումարը Սուբսիդիա հատկացնողն պետք է Սուբսիդիա ստացողին վճարի սույն պայմանագրում նշված բանկային հաշվին փոխանցումներ կատարելու եղանակով:

3.3. Սուբսիդիա ստացողի կողմից աշխատանքների կատարման, սույն պայմանագրով, սահմանված ցուցանիշներն ու պայմանները խախտվելու դեպքում Սուբսիդիա հատկացնողն իրավունք ունի վերանայել սույն պայմանագրի 3.1. կետում նշված գումարի չափը:

3.4. Սույն պայմանագրի 3.1. կետում նշված գումարն իր մեջ է ներառում սույն պայմանագրի կատարման հետևանքով Սուբսիդիա ստացողի կողմից վճարման ենթակա բոլոր տեսակի հարկերի, տուրքերի ու պարտադիր վճարների գումարները, որոնք Սուբսիդիա ստացողը, հանդիսանալով հարկային գործակալ, պարտավոր է ինքնուրույն հաշվարկել ու վճարել Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման համայնքների բյուջեներ:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկու Կողմերի ստորագրության պահից:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները կողմերը պարտավոր են կատարել պատշաճ և սահմանված ժամկետներում: Դրանք ոչ պատշաճ կամ ժամկետանց կատարելու, չկատարելու կամ կատարելուց խուսափելու դեպքում, ինչպես նաև իրենց գործողություններով կամ անգործությամբ սույն պայմանագրի կատարման համար խոչընդոտներ ստեղծելու, մյուս կողմին վնաս պատճառելու համար կողմերից յուրաքանչյուրը կրում է պատասխանատվություն մյուս կողմին պատճառած վնասների լրիվ ծավալով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.2. Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ մյուս կողմի՝ սույն պայմանագրի պայմանները խախտելու դեպքում: Այդ ժամանակ նախաձեռնող կողմը պետք է ստանա վնասների լրիվ չափով փոխհատուցում:

6. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

6.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:

6.2. Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ՝ մյուս կողմի, սույն պայմանագրի հաճախակի (շարունակաբար) կամ կոպիտ (էական) խախտման դեպքում: Այդ ժամանակ նախաձեռնող կողմը պետք է ստանա վնասների լրիվ չափով փոխհատուցում:

6.3. Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած հակընդդեմ պարտավորության հաշվանցով առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

6.4. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի երկկողմ գրավոր համաձայնություն կազմելու միջոցով:

6.5. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

6.6. Սույն պայմանագիրը կնքելիս կողմերը հաստատում են, որ դրանով իրենց շահերը և օրինական իրավունքները ոչ մի կերպ չեն խախտվում կամ սահմանափակվում:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍԻՆ

Սույն պայմանագիրը կազմված է 6 (վեց) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

ՍՈՒԲՍԻԴԻԱ ՀԱՏԿԱՑՆՈՂ	ՍՈՒԲՍԻԴԻԱ ՍՏԱՑՈՂ
Առողջապահության նախարարություն	**Վ.Դվինի ԲԱ ՀՈԱԿ**

Հասցե	Երևան, Կառավարական տուն 3	Հասցե	գ.Վերին Դվին
Սպասարկող բանկ	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Սպասարկող բանկ	Արդշինբանկ ՓԲԸ Արտաշատի մ/6
Բանկային հաշիվ	900011024222	Բանկային հաշիվ	247550193228
ՀՎՀՀ	02507171	ՀՎՀՀ	04207719

ԱՆ գլխավոր քարտուղար՝

Լուսինե Քոչարյան

KOCHARYAN LUSINE 6509770407

Подписано: KOCHARYAN LUSINE 6509770407
DN: cn=KOCHARYAN LUSINE 6509770407, c=AM
Дата: 2020.06.23 20:15:37 +04'00'

/ստորագրություն/

« 28 » ապրիլի 2020 թ

Հեռ: +37460808003
Ֆաքս:
E-mail: info@moh.am

Տնօրեն՝

Նվարդ Աղազարյան

/ստորագրություն/

« 28 » ապրիլի 2020 թ

Հեռ: +37493322598
Ֆաքս:
E-mail: verindvin-ba@mail.ru